ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

Արփինե Առուշանյան[1]

ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *ծայրահեղ շիայական հոսանքներ, ալավիներ, ահլ-է հադդ, եզդիականություն, թանասուխ, հոլուլ, կյանքի աղբյուր, դրախտ, դժոխք:*

Ծայրահեղ շիաների շրջանում լայնորեն տարածված կարևորագույն գաղափարներից է թանասուխը՝ հոգու վերամարմնավորման մասին պատկերացումը (արաբերեն n-s-x «արտագրել, փոխարինել մի բանը մյուսով» արմատից): Թանասուխ եզրույթը Ղուրանում չի հանդիպում, իսկ հադիսներում կիրառվում է միայն մեկ անգամ՝ «*փոխել*», «*մի վիճակից տանել դեպի մյուսը*» իմաստով:[2]

Այս եզրը ոչ ուղղադավան գրականության մեջ երկու իմաստով է հանդես գալիս՝ 1. հոգիների անցումը մի մարմնից մյուսին, 2. որոշ ծայրահեղ շիայական աղանդների դեպքում որպես աստվածային տարրի փոխանցումը մի իմամից մյուսին:[3] [4]

---

[1] ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ, իրանագիտության ամբիոնի դասախոս, էլ. հասցե՝ arpine.arushanyan@gmail.com

[2] EI (new edition)10: 182:

[3] Այս երկորդ իմաստով թանասուխը մոտենում է հոլուլին՝ «աստվածային էության ներթափանցումը որևէ արարածի մեջ»: Այս առումով որոշ շիայական խմբեր այնքան հեռուն են գնացել, որ աստվածացնում են Ալիին՝ ասելով, որ Աստծո ոգին կամ սրբազան ոգին բնակվել է Ալիի մեջ, հետո նրանից անցել է Հասանին, Հուսեյնին և այդպես շարունակ: Որոշ ծայրահեղ շիայական աղանդների (կայսանիներ, բայանիներ, խաթաբիներ և այլն) համոզմամբ այս գործընթացն ավելի վաղ է սկսվել՝ Մուհամեդից, նույնիսկ Ադամից (տես՝ аш-Шахрестани, Книга о Религиях и Сектах, 1984, Москва, стр. 186):

[4] Թանասուխի՝ մի քանի իմաստներ ունենալը երբեմն մոտեցնում է այն ռաջային (թարգ.՝ հոգու վերադարձ, Friedman, Y., The Nus'ayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, pp.

Հոգու վերամարմնավորման գաղափարի համար թանասուխ եզրը ամենակիրառելին է: Ալ-Մասուդին տալիս է naḳala «փոխանցել» բայից տարբեր կազմություններ՝ nuḳla, tanaḳḳul, intiḳāl:[5] Նույն տերմինները հանդիպում են նաև Նաուբախտիի մոտ:[6]

Ալ-Բիրունիի կողմից հիշատակվող մի անանուն աստվածաբան տալիս է հոգու վերամարմնավորման չորս տեսակներ, որոնք ամենատարբեր կերպով են մեկնաբանվում: Դրանք են 1. նասխ (հոգու անցումը մարդու մարմնից մեկ այլ մարդու մարմնին), 2. մասխ (հոգու անցումը մարդու մարմնից

102-103): Ռաջայի և թանասուխի միջև կապը պատկերավոր բացատրելու համար միջնադարյան արաբ հեղինակ ալ-Սայիդ ալ-Հիմյարին մի պատմություն է պատմում. «Մի մարդ ալ-Սայիդից պարտքով հարյուր դինար է խնդրում՝ խոստանալով վերադարձնել, երբ նորից կյանքի կգա: Ալ-Սայիդը համաձայնում է տալ նույնիսկ ավելին, եթե միայն երաշխիք ստանա, որ նա կվերադառնա որպես մարդ: Պարտք խնդրողը զարմանում է. «Էլ ուրիշ ի՞նչ կերպ կարող եմ վերակենդանանալ»: Ալ-Սայիդն ասում է. «Վախենում եմ, որ կվերակենդանանաս որպես շուն կամ խոզ, և իմ գումարը կկորի» (տես Friedlaender, I., The Heterodoxies of the Shiites in the Presentation of Ibn Hazm, Journal of the American Oriental Society , 1908, Vol. 29 (1908), p. 26): Ըստ այս պատմության՝ ռաջան նշանակում էր վերադարձ որպես մարդ, իսկ թանասուխը՝ որպես այլ արարած: Միջնադարյան մի շարք մտածողներ հավատում էին երկուսին էլ, կամ մերժում դրանցից մեկն ու մեկը: Քութայիրը, ինչպես և ալ-Սայիդը, հավատում էր և՛ ռաջային, և՛ թանասուխին՝ նույնացնելով դրանք: Իբն Բաբույեն ջանասիրաբար պաշտպանում է ռաջայի գաղափարը և ժխտում է թանասուխը: Այս երկու տերմինները միաժամանակ օգտագործվում են նաև Իբն Խալդունի մոտ՝ մատնանշելով հոգու վերամարմնավորումը նույն մարմնում կամ որպես այլ արարած (նույն տեղում, էջ 27): Բացի այս մի քանի հեղինակներից, մնացած բոլոր աղբյուրներում այս երկու գաղափարները հստակ տարբերվում են: Հետաքրքիր է նաև իբն Հազմի տեսակետը թանասուխի վերաբերյալ: Ըստ Հազմի՝ նրանք, ովքեր հավատում են հոգու վերամարմնավորմանը, բաժանվում են երկու խմբի: Մի խումբը, այդ թվում Ահմադ իբն Հաիբը, նրա աշակերտ Ահմադ իբն Նանուսը, Աբու Մուսլիմ Խորասանին, Մուհամմեդ իբն Զաքարյա ալ-Ռազին, պնդում է, որ մարմինը լքող հոգին ուղարկվում է մեկ այլ մարմին, որը նախորդից տարբերվում է: Նրանք պնդում են, որ հոգու վերամարմնավորումը տեղի է ունենում պատժի կամ խրախուսման արդյունքում, բազմաթիվ մեղքեր ու վատ արարքներ գործած մարդու հոգին կտեղավորվի ցածրակարգ, ամեն տեսակ կեղտի մեջ թավալվող, ծանր աշխատանք կատարող և սպանդի ենթարկվող կենդանիների մարմնի մեջ (նույն տեղում, էջ 64):

[5] EI 10: 182;

[6] Ан-Наубахти, *Шиитские Секты*, перевод с арабского, иссл. и коммент. С.М. Прозорова, Москва, 1973.

կենդանու մարմնին), 3. ռասխ (հոգու վերամարմնավորումը բույսի մեջ), 4. ֆասխ (հոգու վերածումը ամորֆ վիճակի):[7]

Հստակ է, որ հոգու վերամարմնավորման գաղափարը իսլամական ծագում չունի և հիմնված չէ Ղուրանի վրա, այնուամենայնիվ, ծայրահեղ շիաները հոգու վերամարմնավորման հետ կապված մեջբերում են Ղուրանի առանձին հատվածներ հատուկ մեկնաբանությամբ:[8]

Ժամանակակից ծայրահեղ շիայական աղանդները պահպանել են հավատը հոգու վերամարմնավորման հանդեպ: Եթե ալևիների ու Իրաքի շիաների մոտ հոգու վերամարմնավորման գաղափարը մարգինալ բնույթ է կրում, ապա ալավիների և ահլ-է հաղդերի շրջանում այն խոր արմատներ ունի:[9]

---

[7] EI 10: 182:

[8] Հոգու վերամարմնավորման գաղափարի ծագմանը տարբեր ուսումնասիրողներ են անդրադարձել: Պոլ Ուոքերը այն հանգեցնում է հունական փիլիսոփայությանը, մասնավորապես Պյութագորասի, Պլոտոնի և Պլոտինուսի գաղափարներին: Ըստ այս տեսության, հոգու վերամարմնավորման մասին պատկերացումը իսլամ է ներթափանցել մութազիլիների միջոցով, որոնք ազդվել են հունական փիլիսոփայությունից (Friedman, Y., The Nus'ayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, p. 103): Մեկ այլ հավանական տարբերակ է հոգու վերամարմնավորման գաղափարի ներթափանցումն արևելքից, մասնավորապես մանիքեականությունից (մանիքեականության մեջ հոգու վերամարմնավորման և դրա ծագման հավանական տարբերակների մասին տես Sundermann W., "Manicheism i. General Survey", *Encyclopædia Iranica*, 2009, available at http://www.iranicaonline.org/articles/manicheism-1-general-survey (accessed on 27 May 2015), pp. 7-8, 15):

[9] Թանասուխի մասին ալավիների պատկերացումները լավագույնս քննարկվում են Kitāb al-usūs կրոնական գրքում (մանրամասն տես Bar-Asher, M. M./ Kofsky, A., The Nus'ayrī-ʿAlawī Religion: An Enquiry into its The
ology and Liturgy, Leiden, 2009 pp. 62-65; Friedman, Y., The Nus'ayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, pp. 104-105):
Հոգու վերամարմնավորման մասին զուգահեռներ կարելի է գտնել նաև եզդիների մոտ: Եզդիները հոգու վերամարմնավորման վերաբերյալ հետաքրքիր ծագումնաբանական առասպել է պահպանել, համաձայն որի մի օր Մանսուր ալ-Հալլաջի քույրը գետի ափին իր կուժն էր լցնում, երբ հանկարծ իր եղբոր հոգին լողալով գալիս և մտնում է կժի մեջ: Ջուրը խմելուց հետո քույրը հղիանում է և մի որդի է

Ալավիների շրջանում հոգու վերամարմնավորումը հայտնի է թաքնիս, թաջայյուլ, նասխ, նաղլ, ռադդ, կարր[10] անուններով:[11] Ալավիները պնդում են, որ մարդու հոգին անցնում է մի մարմնից մյուսին մի քանի անգամ: Բարեպաշտ ալավիի հոգին կմտնի ավելի կատարյալ մարմնի մեջ, քան իր սեփականն էր, մինչդեռ մեղսավորի հոգին՝ պիղծ գազանի մարմնում:[12]

Ալ-Խասիբին հանգամանորեն նկարագրում է մի մարմնից մյուսին հոգու փոխանցման ընթացքը: Մահացած մարդու մարմինը սերմնահեղուկի հետ միասին անցնում է կնոջ արգանդ, որտեղ հիշում է իր ապրած նախորդ կյանքերը: Այս հիշողությունը պահպանվում է նաև կյանքի առաջին 24 ամսում, որից հետո մարդը մոռանում է ամեն ինչ: Այս պրոցեսը ցավոտ է և՛ մեղսավորի, և՛ բարեպաշտի համար, այդ պատճառով էլ ծնվելիս մարդը լացում է, քանի որ հիշում է իր մեղքերը և անհանգիստ է իր ճակատագրի համար:[13]

Մի քանի ալավի հեղինակներ խոսում են մահվան և կնոջ արգանդում հայտնվելու միջև միջանկյալ փուլի մասին: Ըստ դրա՝ մահից հետո հոգին հրեշտակների կողմից տարվում է «*կյանքի*

ծնում, որն էլ հենց Հալլաջի վերամարմնավորումն էր (Empson R.H. W. The Cult of the Peacock Angel, London, 1928, pp. 78-79):

[10] Friedman, Y., The Nusʼayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, p. 102

[11] Ալավիները հավատում են նաև ժամանակի պարբերական լինելուն և օգտագործում են dawr/kawr (շրջան) բառերը՝ բնորոշելու այս աշխարհում կյանքի վերածնման փուլերը, ինչպես նաև Ալիի մանիֆեստացիան մարդկային տարբեր կերպարանքներով (տես՝ Moosa, M., Extremist Shiites, the Ghulat Sects, New York, 1988, стр. 364; Lyde, S., The Asian Mystery, Illustrated in the History, Religion, and present State of the Ansaireeh or Nusairis of Syria, London, 1860, p. 141): Յուրաքանչյուր մեծ փուլ բաղկացած է ավելի փոքր փուլերից, որոնց ընթացքում Աստծո յոթ առաքյալներ կամ մարգարեներ են հայտնվում: Մեր փուլում դրանք են Ադամը, Նոյը, Աբրահամը, Մովսեսը, Հիսուսը, Մուհամմադը և նրա ընտանիքը (Ալին, Ֆաթիման և նրա ընտանիքը) (Friedman, Y., The Nusʼayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, pp. 111-112):

[12] Moosa, M., Extremist Shiites, the Ghulat Sects, New York, 1988, p. 362.

[13] Friedman, Y., The Nusʼayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, p. 107.

աղբյուր»[14] (ʻayn al-hayāt), որտեղ այն մաքրվում է և սպասում մինչև նյութական աշխարհում հղիության սկիզբը:[15]

Աշխարհածնության մասին ալավիական մի առասպելի համաձայն՝ ալավիների հոգիները աշխարհի արարման վաղ փուլում լույսի մասնիկներ էին, որոնք շրջապատում էին Աստծուն և երկրպագում նրան: Մի շարք մեղքերից ու զանցանքներից հետո, այդ թվում նաև Աստծու եզակիությունը և նրա աստվածային էությունը կասկածի տակ դնելը, լույսի այս մասնիկները ընկնում են նյութական աշխարհ, որտեղ ձեռք են բերում մարմին և մահանալուց հետո վերամարմնավորվում՝ ժամանակավոր (ընտրյալների համար) և հավերժական (դատապարտվածների համար): Նրանց ընկնելու ընթացքում Աստված յոթ անգամ, երկնքի յոթ տարբեր շերտերում հայտնվում է և փորձում է նրանց հնազանդեցնել: Նա, ով ճանաչում է Աստծո եզակիությունը, ազատվում է թանասուխից, չի փակվում մարդկային մարմնում և ուղարկվում է ճանապարհորդության՝ դեպի երկնքի յոթ շերտերի

[14] Կյանքի աղբյուրի գաղափարը հանդիպում է նաև հրեական ավանդույթում (Mekōr hayīm): Իսպանացի հրեա բանաստեղծ Իբն Գաբիրոլը (մահ. 1058թ.) խոսում է բնության մեջ հոգու բանտարկված լինելու մասին: Մեկ այլ հուդայական մտածող՝ Ռաբբի Աբրահամ իբն Էզրան կյանքի աղբյուրի մասին խոսելիս նկարագրում է այն որպես հոգու մաքրման վայր: Ամենայն հավանականությամբ, և՛հրեական, և՛ ալավիական կրոնական միտքը կրում է նեոպլատոնիզմի ազդեցությունը: Հույն փիլիսոփա Պլոտինուսը նշում է կյանքի շատրվանը որպես հոգիների աղբյուր (Underhill, E., Mysticism, a study in the nature and development of man's spiritual consciousness, New York, E.P. Dutton and Company, 1912, p. 281): Ալավիական ավանդույթում աղբյուրը մարմնավորվում է ի դեմս Սալման ալ-Ֆարիսիի: Ալ-Խասիբին սա բացատրում է նրանով, որ Սալմանը ջրի մարմնավորումն է, իսկ ջուրը, մաքրող հատկությունից բացի, կարող է նաև հանգցնել կրակը, որն էլ չարի խորհրդանիշ է (Friedman, Y., The Nusʼayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, pp. 108-109):

[15] Friedman, Y., The Nusʼayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, pp. 107-108.
Ըստ եզդիական հավատալիքների՝ մահից հետո մարդու հոգին կարող է մտնել կենդանիների ու բույսերի մեջ և շարունակել կյանքը: Որոշ ժամանակ այդպես ապրելուց հետո հոգին կարող է մտնել կնոջ արգանդ, բնակություն հաստատել չծնված երեխայի մարմնում և նորից ծնվել որպես մարդ (Ավդալ Ա., Եզդի քրդերի հավատալիքները, Երևան, «Գիտություն», 2006, էջ 75; Ամրյան Ռ., Եզդիների կրոնական աշխարհայացքը, Երևան, 2016, էջ 223):

վերևում գտնվող աստվածային լույսը: Ի դեպ, սա վերաբերում է միայն տղամարդկանց, կանայք այս ճանապարհորդությանը չեն մասնակցում, քանի որ նրանք հոգի չունեն:[16]

Ըստ ալավիների սուրբ գրքի՝ Քիթաբ ալ-Մաջմուի, կան հոգու վերամարմնավորման յոթ տեսակներ՝ 1. Նասխ (հոգու անցումը մի մարդու մարմնից մյուսին). 2. Մասխ (հոգու անցումը մարդու մարմնից կենդանու մարմնին), 3. Ֆասխ (հոգու անցումը բույսի), 4. Ռասխ (հոգու անցումը կարճ բույսի), 5. Վասխ (հոգու անցումը կեղտի կամ ցեխի), 6. Քաշշ (հոգու անցումը չոր բույսի կամ ծղոտի), 7. Քաշշաշ (հոգու անցումը այնպիսի միջատների, ինչպես ճանճը կամ մրջյունը):[17] Ալ-Խասիբիի Al-*Risāla al-Rāstbāšiyya* աշխատության մեջ տրվում են թանասուխի միայն հինգ փուլեր՝ նասխ, մասխ, վասխ, ֆասխ և ռասխ:[18]

---

[16] Այս մասին մանրամասն տես Daftari, F., The History of Shi'I Islam, London, 2013, pp. 188-189: Կանանց՝ հոգու ճանապարհորդությանը չմասնակցելու հետ կապված ալավիական ուղղություններից մեկում, սակայն, մի շարք տարբերությունների ենք հանդիպում: Եթե հեիդարիները, շամալիները և ղեիբիները միակարծիք են թանասուխի հարցում, ապա քալազիները, որոնք ապրում են Թարսուսում, ընդունում են, որ կանանց հոգին ևս կարող է մի մարմնից անցնել մյուսին: Տղամարդը վատ արարքներ գործելու դեպքում վերածնվում է որպես կին, իսկ ահա բարեպաշտ կինը կարող է խրախուսվել՝ հաջորդ կյանքում տղամարդու մարմին ստանալով (Besterman, Th. The Belief in Rebirth of the Druses and Other Syrian Sects, Folklore , Jun. 30, 1928, Vol. 39, No. 2 (Jun. 30, 1928), pp. 141-142:

[17] Bar-Asher, M. M. and A. Kofsky, *The Nusʾayrī-ʿAlawī Religion: An Enquiry into its Theology and Liturgy*, Leiden, 2009, pp. 64-65; Dussaud, R., *Histoire et religion des Nosairîs*. Paris: Bouillon, 1900, p. 124; Friedman, Y., The Nusʾayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, p. 106:

[18] Նույն տեղում, էջ 106:

Եզդիականության հետ մեկ այլ զուգահեռ գտնում ենք հենց հոգու՝ մարդու կամ կենդանու մարմնում վերամարմնավորվելու հարցում: Եզդիներն ասում են, որ երբ մարդը արդար է և ազնիվ, նրա հոգին անմիջապես փոխանցվում է մեկ այլ մարդու մարմնի, հակառակ դեպքում՝ կենդանու (Joseph, I., Devil Worship, Boston, The Gorham Press, 1919, p. 69), հատկապես խոզի կամ սողունի (Kreyenbroek Ph. G., Yezidism, Its Background, Observances and Text ual tradition, Lewiston-Queenston-Lampeter,1995, p. 147): Մյուս կողմից, եզդիները լավ ծանոթ են դրախտի ու դժոխքի գաղափարներին, ըստ որի բոլոր չարագործները հավիտյանս կուղարկվեն դժոխք, իսկ բարեպաշտները ժամանակավորապես կհանգրվանեն դրախտում մինչև հաջորդ վերամարմնավորումը: Երբ նրանց հոգիները կատարելապես մաքրված կլինի, նրանք

Գերմանացի քարտեզագիր և ճանապարհորդ Կ. Նիբուհրն ասում է, որ հավատացյալ ալավիի հոգին կարող է հայտնվել դրախտում միայն մի քանի մարմիններով անցնելուց հետո, իսկ անհավատի հոգին, անցնելով հինգ փուլերով՝ ֆասխ, նասխ, մասխ, վասխ և ռասխ, պետք է շարունակի մնալ երկրի վրա որպես ոչխար մինչև Ֆաթիմայի վերադարձը:[19] Ընդ որում, անհավատների (սուննիների և Ալիի թշնամիների) հոգիները կենդանու վերափոխվելու մասին ալավիների հավատալիքների վերաբերյալ տվյալներ հաղորդում են նաև օտար աղբյուրները: Հայտնի դրուզ հեղինակ Համզա իբն Ալին (մահ. 1030) ևս անդրադառնում է դրուզների ու ալավիների շրջանում թանասուխի գաղափարին և գրում է, որ ալավիների պնդմամբ անհավատների ու այլադավանների հոգիները կբնակեցվեն շան և այլ պիղծ կենդանիների՝ խոզի, կապիկի, բվի, վայրի թռչնի մարմնում, որից հետո կայրվեն կրակի մեջ և կծեծվեն մուրճով: Համզան հոգու վերամարմնավորումը կենդանու մարմնում (musūkhiyyāt)[20]

կկարողանան միավորվել Աստծո հետ: Շատ եզդիներ համառորեն հրաժարվում են հավատալ դժոխքի գոյությանը՝ վկայակոչելով եզդիական առասպելն առ այն, որ Աբրիք Շաութա անունով մի երեխա, ունենալով ախտահարված աչքեր, քիթ, ականջներ, ձեռքեր և ոտքեր, յոթ տարի լացում է մի դեղին կժի մեջ: Երբ կուժը լցվում է, նա դատարկում է դժոխքի կրակների վրա և հանգցնում դրանք, որպեսզի այլևս ոչ ոք չտառապի (Empson R.H. W. The Cult of the Peacock Angel, London, 1928, pp. 80-81; Kreyenbroek Ph. G., Yezidism, Its Background, Observances and Text ual tradition, Lewiston-Queenston-Lampeter,1995, p. 147)

[19] Lyde, S., The Asian Mystery, Illustrated in the History, Religion, and present State of the Ansaireeh or Nusairis of Syria, London, 1860, p. 140.

[20] Մուսուխիյյայի մասին պատկերացումները խոր արմատներ ունեն: Ըստ Ջաֆար ալ-Սադիկի՝ մուսուխիյյան առաջացել է սատանայի կողմից աստծուն չենթարկվելու հետևանքով: Երբ Աստված ստեղծեց Ադամին, նա խնդրեց բոլոր հրեշտակներին խոնարհվել մարդու առաջ: Բոլորը հնազանդվեցին Աստծուն, բացի Սատանայից: Վերջինս պատճառաբանում էր, որ ինքն ավելի բարձր է, քան Ադամը, քանի որ ստեղծված է կրակից, իսկ մարդը՝ կավից (Ղուրան 7:12; 38: 75-77): Սատանայի անհնազանդության պատճառով էլ Աստված հիմք դրեց մուսուխիյյային և ասաց, որ դա Սատանայի ու նրա սերունդների համար է, ովքեր կվերամարմնավորվեն բոլոր տեսակների գազանների: Դրանից հետո Աստված Սատանային ու նրա ժառանգներին հագցնում է կենդանու մաշկ, իսկ Ադամին ու նրա սերունդներին՝ մարդկային կերպարանք է տալիս: Ուստի մուսուխիյյան պատիժ է բոլոր անհավատների ու

համարում է աբսուրդային, պնդելով, որ դրան հավատացողները կտառապեն և՛ այս, և՛ հաջորդ կյանքում:[21][22]

Ըստ Սուլեյման ալ-Ադանիի՝ բոլոր ալավիները հավատում են, որ կրոնական հարուստ գիտելիքներ ունեցող բարձրաստիճան մուսուլմանների հոգիները կտեղավորվեն ավանակների, կիրթ քրիստոնյաներինը՝ խոզերի, իսկ հրեաներինը՝ կապիկների մարմնում: Ոչ բարեպաշտ ալավիները կվերածնվեն որպես խոշոր եղջերավոր անասուն, իսկ նրանք, ովքեր և՛ լավ, և՛ վատ հատկանիշներ են դրսևորել, կվերադառնան որպես այլ կրոնական ուսմունքների հետևորդներ:[23]

Ալիի հակառակորդների հոգիները կմարմնավորվեն շների կամ այլ պիղծ կենդանիների մեջ: Ալ-Խասիբին մի պատմություն է բերում, ըստ որի Ղադիր Խումի օրը Մուհամմադ մարգարեն հավաքում է իր մերձավորներին և Ալիին մատնանշելով՝ ասում է. «*Ահա ձեր Աստվածը, երկրպագեք նրան, նա է ձեր Տերը, ընդունեք նրա եզակիությունը*»: Երկրային և երկնային հյուրերից ոմանք, համաձայն չէին Ալիի՝ որպես Տեր եզակիության հետ և

Սատանային երկրպագողների համար (Moosa, M., Extremist Shiites, the Ghulat Sects, New York, 1988, p. 364): Ջաֆար ալ-Սադիկը որևէ կենդանու կողմից մարդու վրա հարձակումը մեկնաբանում է հետևյալ կերպ. այդ կենդանին նախորդ կյանքում անհավատ է եղել և որևէ վիրավորանք կամ վնասվածք ստանալով հավատացյալ մեկից, կենդանու տեսքով վերադարձել է վրեժ լուծելու նպատակով (նույն տեղում):

[21] Նույն տեղում, էջ 363.

[22] Հոգու վերամարմնավորումը դրուզների հավատալիքների կարևորագույն մաս է կազմում: Չնայած շատ ուսումնասիրողներ այն համարում են դրուզների ու ալավիների ուսմունքների հիմնական ընդհանրություններից մեկը, այս երկուսի տեսակետների մեջ հսկայական գաղափարական տարբերություն կա: Դրուզները հոգու վերամարմնավորումը ընկալում են որպես հնարավորություն՝ մեղքերն ու սխալները ուղղելու և հոգին մաքրելու համար, մինչդեռ ալավիների դեպքում այն համարվում է պատիժ գործած մեղքերի համար (Friedman, Y., The Nus'ayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, p. 110; դրուզների շրջանում հոգու վերամարմնավորման մասին մանրամասն տես *Dwairy Marwan*, "*The Psychosocial Function of Reincarnation among Druze in Israel*," *Culture*, *Medicine, and Psychiatry* 30, *2006*: 29-53; Besterman, Th. The Belief in Rebirth of the Druses and Other Syrian Sects, Folklore , Jun. 30, 1928, Vol. 39, No. 2 (Jun. 30, 1928), pp. 142-148):

[23] Moosa, M., Extremist Shiites, the Ghulat Sects, New York, 1988, p. 365.

դժգոհություն են հայտնում: Մյուսներն, ովքեր տեղյակ էին Աստծո եզակիությանը, աղոթում են և շնորհակալություն են հայտնում Ալիին: Երկնային հյուրերից նրանք, ովքեր հրաժարվում են ճանաչել Ալիի եզակիությունը, վերածվում են դոդոշի և ուղարկվում երկիր: Ալին բարկացած լինելով, սպանում է նրանց իր սրով՝ Զուլֆիղարով: Երբ Սալման ալ-Ֆարիսին տեսնում է Ալիին, որի սրից արյուն է կաթում, հարցնում է պատճառը: Ի պատասխան Ալին ասում է, որ որոշ երկնային բնակիչներ մերժել են իր եզակիությունը որպես Աստված, ուստի և պատժվել են:[24]

Ալավիները հավատում են, որ մարդու հոգին մաքրվում է՝ անցնելով 21 վերամարմնավորումների միջով, որոնցից յուրաքանչյուրը տևում է 1077 տարի: Սրանից հետո ալավիները միանում են երկնային բնակիչներին՝ դառնալով երկնային լուսատուներ կամ հրեշտակներ, քանի որ իրենց և հրեշտակների հոգիները նույնն են: Ուստի աղոթում են Ալիին և խնդրում են հագցնել իրենց qamīs (բառ. վերնաշապիկ), կամ լույսի ծրար:[25]

Թանասուխի գաղափարը որոշակիորեն ապահովում է նաև ալավիների շրջանում տղամարդկանց բարձր դիրքը: Ալավի կինը կարող է վերամարմնավորվել մեկ այլ կնոջ, բայց երբեք ոչ տղամարդու, քանի որ Աստված կնոջը ստեղծել է չարքերից, հետևաբար և նրանք հասարակության մեջ ավելի ցածր դիրք ունեն:[26]

---

[24] Նույն տեղում, էջ 365.

[25] Նույն տեղում, էջ 366; Lyde, S., The Asian Mystery, Illustrated in the History, Religion, and present State of the Ansaireeh or Nusairis of Syria, London, 1860, p. 141; Friedman, Y., The Nus'ayrī-ʿAlawīs, An Introduction to the Religion, History and Identity of the Leading Minority in Syria, Brill, Leiden-Boston, p. 102.

[26] Ինդոնեզիայի Բութոն կղզու մուսուլմանների շրջանում տղամարդու՝ կնոջ վերամարմնավորվելն ընկալվում է որպես պատիժ: Կանայք նախկինում սգում էին այն փաստը, որ նրանք ծնվել (վերածնվել) են որպես կին, քանի որ տղամարդիկ միշտ համարվել են ավելի կարևոր, քան կանայք (Schoorl J. W., Belief In Reincarnation On Buton, S.E. Sulawesi, Indonesia, Bijdragen tot de Taal-, Land- en Volkenkunde, Deel 141, 1ste Afl.,Anthropologica XXVII (1985), pp. 114-115):

Ցանկացած վերամարմնավորում կշարունակվի մինչև Մահդիի ժամանումը: Կենդանու վերափոխվելը պատժի փոքր տեսակն է, քանի որ վերջնական ու ամենամեծ պատիժն իր հետ կբերի Մահդին, ով կսպանի բոլորին իր սրով:[27]

Թանասուխի հետ անմիջական կապ ունեն նաև աշխարհի վերջի, մեռյալների հարության ու Դատաստանի օրվա մասին պատկերացումները: Kitab Majmu al-A'yad գրքում ասվում է, որ Սատանան Աստծուն խնդրել է հետաձգել իր պատիժը մինչև մեռյալների հարության օրը, սակայն Աստված ավելի քիչ ժամանակ է տվել, մինչև Մահդիի գալը, որը պետք է սպաներ Սատանային:[28] Հարության օրվա մասին այս պատկերացումը զուտ իսլամական է և հակասում է ալավիական հավատալիքներին, որոնց համաձայն ալավի հանգուցյալների հոգիները գերեզմանը լքելուց հետո կգնան լույսի աշխարհ, մինչդեռ այլադավանների հոգիները հավիտյանս կտանջվեն ու կտառապեն: Kitab Ta'lim al-Diyana al-Nusayriyya գրքում կարդում ենք, որ Ալին ևս մեկ անգամ հանդես կգա առանց որևէ կերպարանավորման, իր իրական տեսքով և բոլոր հավատացյալների հոգիները վեր կհանի մսից ու արյունից կազմված մարմնից ու կհագցնի նրանց հավիտենական լույսով:[29]

Ալավիները հավատում են, որ մահանալիս հոգին մարմնից դուրս է գալիս բերանով: Սա է պատճառը, որ նրանք կախաղանը որպես մահապատժի ձև չեն ընդունում, քանի որ այդ ժամանակ հոգին չի կարողանում մարմինը լքել: 19-րդ դարավերջի հեղինալ Լիդը իր հուշերում գրում է, որ ալավիները տան շքամուտքի դռան

[27] Moosa, M., Extremist Shiites, the Ghulat Sects, New York, 1988, p. 367.
[28] Lyde, S., The Asian Mystery, Illustrated in the History, Religion, and present State of the Ansaireeh or Nusairis of Syria, London, 1860, p. 143.
[29] Moosa, M., Extremist Shiites, the Ghulat Sects, New York, 1988, p. 369.

վրա երկու անցք են բացում, որպեսզի մահացողի հոգին մի անցքով դուրս գա և չհանդիպի մյուսով ներս մտնող չար ուժերին:[30]

Ինչ վերաբերվում է դժոխքին ու դրախտին, ապա ալավիների պատկերացմամբ բոլոր մարդիկ դասատանի օրը կքննվեն ըստ իրենց արարքների: Նրանք, ովքեր լավ գործեր են արել, կգնան դրախտ, մինչդեռ չարագործները և մեղսավորները բազմաթիվ վերամարմնավորումներ անցնելուց, սակայն այդպես էլ չմաքրվելուց հետո կայրվեն հավերժական կրակներում:

Ալավիների մոտ դրախտի ու դժոխքի մասին պատկերացումները չեն համընկնում իսլամական պատկերացումների հետ: Դրախտի կարժանանան նրանք, ովքեր ընդունում են Ալիին և նրա, Մուհամմադի ու Սալման ալ-Ֆարիսիի երրորդությունը: Ովքեր ընդունում են այս երեքին, կհայտնվեն դրախտում, ովքեր ոչ՝ դժոխքում: Այսպիսով, բոլոր աթեիստները, այլադավաններն ու այլ կրոնների հետևորդները դատապարտված են հայտնվել դժոխքում: Վերջնական ու հավերժական երջանկության հասնում է նա, ով ճանաչում է այս երրորդությանը և մշտապես ապրում են դրախտի յոթ շերտերից մեկում՝ ըստ իր գրված դիրքի:[31] Ըստ Ջաֆար ալ-Սադիկի՝ դրախտի առաջին շերտը իմամների համար է, երկրորդը՝ նաթիղների (ընդունված մարգարեներ), երրորդը՝ նաջիբների (ընտրյալներ), չորրորդը՝ Մուխլիսունի (մաքրասիրտներ), հինգերորդը՝ Այթամի (որբեր, սրանք Մուհամմադի հինգ մերձավորներն են, Աբու Զար ալ-Գիֆարին, ալ-Միդդադ իբն Ասվադ ալ-Քինդին, Աբդ Ալլահ իբն Ռավահա ալ-Անսարին, Օսման իբն Մազուն ալ-Նաջաշին և Ղանբար իբն Քադան ալ-Դաուսին), վեցերորդը՝ Հուջուբի

[30] Lyde, S., The Asian Mystery, Illustrated in the History, Religion, and present State of the Ansaireeh or Nusairis of Syria, London, 1860, p. 143.
[31] Moosa, M., Extremist Shiites, the Ghulat Sects, New York, 1988, p. 371

(աստվածային գաղտնիքը թաքցնողներ), յոթերորդը՝ բաբերի (դռներ):[32]

Այժմ անդրադառնանք ահլ-է հաղղերի շրջանում թանասուխի գաղափարին: Այն հայտնի է dūnādūnī (թուրք. don «հագուստ»)[33] անվամբ,[34] օգտագործվում է նաև be lebās āmadan (պրսկ. հագուստ հագնել) արտահայտությունը:

Ահլ-է հաղղերն ընդունում են թանասուխի 4 տեսակ՝ 1. նասխ (հոգու անցումը մարդկային մի մարմնից մյուսին, սա նաև կոչվում է rūh be rūh), 2. մասխ (հոգու անցումը կենդանու մարմնին), 3. ռասխ (հոգու անցումը բույսի), 4. ֆասխ (հոգու անցումն անշունչ առարկայի): [35] Հոգու անցումը մի մարմնից մյուսին համարվում է

[32] Ղուրանում և իսլամական գրականության մեջ դրախտի մասին պատկերացումները էապես տարբերվում են ծայրահեղ շիայական միջավայրում տարածված պատկերացումներից: Հաճախ հանդիպում ենք դրախտի շերտերի հիերարխիկ բաժանման, որոնց հերթականությունը, սակայն, երբեմն փոփոխվում է: Ըստ Սահիհ ալ-Բուխարի ժողովածուում գրի առնված Իբն Աբբասի հադիսի՝ դրախտը բաղկացած է յոթ շերտերից, որոնք են՝ 1. (ամենաբարձր շերտը) Աստծո կացարանը, 2. Խաղաղության կացարանը, 3. Էդենի դրախտը, 4. Ապաստարանը, 5. Անմահության կացարանը, 6. Ֆերդոուսը, 7. Հաճույքների կացարանը: Ավելի քիչ տարածում ունեցող մի շարք տեսակետների համաձայն՝ կան դրախտի միայն 4 շերտեր (EI IV: 450):

[33] Նույն արտահայտությունը (*don değiştirme* «փոխել հագուստները») տարածված է նաև ալևիների և եզդիների շրջանում: Ալևիների մոտ այն վերաբերվում է հիմնականում Ալիի փոխակերպումներին: Հասարակ մահկանացուների հոգու վերամարմնավորման մասին պատկերացումները Դերսիմում տարածված էին դեռևս մեկ դար առաջ, բայց այժմ գրեթե մոռացության է մատնվել (van Bruinessen, M. “Between Dersim and Dâlahû: Reflections on Kurdish Alevism and the Ahl-i Haqq religion”, *Islamic Alternatives: Non-Mainstream Religion in Persianate Societies* [Göttinger Orientforschungen, III. Reihe: Iranica, N.F. 16]. Wiesbaden: Harrassowitz, 2017, p. 70): Եզդիների շրջանում հանդիպում ենք *kirās gehorrin* «փոխել հագուստը» արտահայտությանը (Allison, Ch., “YAZIDIS i. GENERAL,” *Encyclopædia Iranica*, online edition, 2004, available at http://www.iranicaonline.org/articles/yazidis-i-general-1 (accessed on 20 September 2016), p. 4): Եզդիականության մեջ գոյություն է ունեցել ներկայումս մոռացության մատնված Šēx kirās (բոց.՝ «շապիկի շեյխ») անունը կրող սուրբը, ով պատասխանատու էր այս աշխարհից հանդերձյալ աշխարհ տեղափոխվելու համար: Ըստ երևույթին՝ սկզբնապես Šēx kirās-ը պատասխանատու է եղել «շապիկը փոխելու», այսինքն՝ հոգու վերամարմնավորման համար (Ամրյան Թ., Եզդիների կրոնական աշխարհայացքը, Երևան, 2016, էջ 223):

[34] van Bruinessen, M., "Ahl-i Haqq", Encyclopaedia of Islam, third edition, Part 2009-2, p. 53.

[35] Խաքսարը գրում է, որ մեր ժամանակներում ավելի շատ հանդիպում է թանասուխի առաջին տեսակը՝ հոգու անցումը մարդկային մի մարմնից մյուսին: Հոգու անցումը բույսի կամ անշունչ առարկաների ներկայումս ավելի հազվադեպ է հանդիպում, երբ

դրական երևույթ, մինչդեռ այլ մարմիններին անցնելը՝ բացասական: Իր հերթին, tanāsux-e rūh be rūh-ը ևս կարող է բացասական կամ դրական ընկալվել, կախված նրանից, թե ըստ նախորդ կյանքում գործած արարքների ինչպիսի նոր մարմին է հոգին մտնելու:[36] Նրանք հավատում են, որ կյանքը ճանապարհորդությունների շղթայից է բաղկացած, և մարդը 50.000 տարվա ընթացքում պետք է անցնի 1001 մարմնավորումների միջոցով, մինչև իր արարքների համար արժանի փոխհատուցում կստանա:[37] Ըստ Ֆիրքանի, հոգու մաքրման հավանականությունը տարբերվում է՝ կախված տվյալ անձի ծագումից: Նրանք, ովքեր դեղին կավից են ստեղծված (zarda-gil), բարի են և յուրաքանչյուր մարմնավորման հետ ավելի են մոտենում Աստծուն և ավելի լուսավոր են դառնում, իսկ նրանք, ովքեր սև կավից (siyāh xāk) են ստեղծված, երբեք չեն տեսնի Արևը:[38]

Հոգին կենդանու մարմնին է անցնում մի շարք մեղքեր գործելու դեպքում՝ սպանություն, գողություն, շնություն, ուրանալը և այլն:

Հետաքրքիր է, որ ահլ-է հաղղերը ոգիներին վերագրում են նույն հատկանիշներն ու արարքները, ինչ մարդկանց, հետևաբար

Sāhib az-Zamān-ի գալուստը մոտ է (Khaksar, M., Reincarnation as Perceived by the "People of the Truth", Iran & the Caucasus, Vol.13, No. 1 (2009), p. 121):

[36] Ըստ ահլ-է հաղղերի ավանդույթի՝ կան ճգնավորներ, որոնք կարող են տեսնել մարդու նոր մարմնավորումը: Խաքսարն իր դաշտային աշխատանքում գրի է առել Քերմանշահում լսած մի պատմություն ինքնասպանություն գործած մի երիտասարդի մասին: Քանի որ ինքնասպանությունը ահլ-է հաղղերի մոտ մեծ մեղք է համարվում, մեղսավորի հոգին չի կարող վերամարմնավորվել ահլ-է հաղղի մարմնում: Ալի Ամանի անունով մի դերվիշ պնդում էր, որ նրա հոգին վերածնվել է Լատինական Ամերիկայում, որտեղ կրքերը իշխում են մտքի վրա, և այդ հոգին մաքրվելու ավելի քիչ հնարավորություն ունի (Khaksar, M., Reincarnation as Perceived by the "People of the Truth", Iran & the Caucasus, Vol.
13, No. 1 (2009), p. 121):

[37] Mir-Hosseini, Z. “Faith, Ritual and Culture among the Ahl-e Haqq”, Kurdish Culture and Identity, ed. Kreyenbroek, Ph., Allison, Ch., London ; Atlantic Highlands, N.J. : Zed Books, 1996, p. 122:

[38] EI I: 261; Khaksar, M., Reincarnation as Perceived by the "People of the Truth", Iran & the Caucasus, Vol.13, No. 1 (2009), pp. 121:

նրանց հոգիները նույնպես ենթարկվում են վերամարմնավորման, փոխում են իրենց dūn-ը: Ընդ որում, ջինները կարող են վերամարմնավորվել կատուների, թռչունների, սողունների և այլն:

Թանասուխի գաղափարը տարածվում է ոչ միայն մարդկանց, այլև Աստծո վրա: Աստվածային էության անցումը մի մարմնից մյուսին, որոնք, ի դեպ, մշտապես շրջապատված են հրեշտակներով, այս ուսմունքի կարևոր մաս է կազմում: Հրեշտակների աստվածային էությունը (ðāt), իր հերթին, ևս ամեն անգամ անցնում է նոր մարմնին:[39] Այդ անցումն ավելի տեսանելի է սրբերի և ընտրյալների դեպքում: Արարումից անմիջապես հետո Շահ Խոշինը հայտնվում է Բենյամինի, ապա Փիր Դավուդի, Մուսայի և մյուսների տեսքով:[40] Աստվածային էությունը կարող է նաև հաստատվել կոնկրետ մարդկանց մարմնում: Շահ Խոշինը ժամանակ առ ժամանակ հայտնվում է ի դեմս տարբեր անհատների, որոնցից ամենաականառուն եղել է 11-րդ դարի իրանցի մեծանուն բանաստեղծ և միստիկ Բաբա Թահեր Օրյանը, որի գերեզմանը Համադանում ահլ-է հաղղերի ուխտագնացության հիմնական վայրերից մեկն է:[41]

[39] Khaksar, M., Reincarnation as Perceived by the "People of the Truth", Iran & the Caucasus, Vol.
13, No. 1 (2009), pp. 119:

[40] Жуковский В. А. Секта “Людей истины” – Ahlі hakk – въ Персіи, Записки Восточного отдела Императорского Русского археологического общества, Т. II, Вып .I., 1888, cc. 9-10:

[41] Տես՝ նույն տեղում, էջ 11: Բաբա Թահերը, ինչպես և նրա քույրը՝ Բիբի Ֆաթիման, համարվում են ահլ-է հաղղերի սրբերից (Heron-Allen, Ed.; Curtis, E. A., The *lament* of *Baba Tahir* : *being* the *Rubaiyat* of *Baba Tahir*, *Hamadani* (Uryan), 1902, London, p. xiii): Բաբա Թահերի մարմնում Շահ Խոշինի հոգու վերամարմնավորման մասին մանրամասն տես Khaksar, M., Reincarnation as Perceived by the "People of the Truth", Iran & the Caucasus, Vol.13, No. 1 (2009), p. 120:

ИДЕЯ ПЕРЕСЕЛЕНИЯ ДУШИ В КРАЙНЕ-ШИИТСКИХ СЕКТАХ

Арпине Арушанян

(Резюме)

Одним из самых важных понятий у крайне-шиитов является танасух – переселение души верующего. Несмотря на то, что в ортодоксальном исламе эта идея не находит большого распространения, здесь мы видим несколько вариантов переселения души, в зависимости от степени благочестивости, деяний при жизни и даже половой принадлежности.

В статье обсуждаются разновидности переселения души, в частности, насх, масх, фасх, расх и т.д. и его особенности у алавитов (здесь мы находим некоторые параллели с иудейской традицией) и ахл-е хакк. Надо отметить, что важным аспектом среди ахл-е хакк, алевитов и езидов является представление о теле, как об одежде, которую надо постоянно менять.

THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS IN EXTREME SHIA SECTS

Arpine Arushanyan

(Summary)

One of the most important ideas among the Extreme Shia sects is tanasukh, transmigration of believer’s soul. Though in orthodox Islam this concept is not very common, here we can see different types of transmigration of souls, according to believer’s godliness, his deeds during lifetime and even gender.

The article discusses various types of transmigration of the souls, particularly naskh, maskh, faskh, raskh etc., as well as some features among the Alawites (here we find some parallels with Jewish tradition) and the Ahl-e haqq. It must be mentioned that an important commonality among the Ahl-e haqq, the Alevites and the Yezidis is the idea of the body which must be changed like clothes.